Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 28-ի գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 21-ի N2500-Ա – N2521-Ա, 2022 թվականի նոյեմբերի 22-ի N2522-Ա -N2530-Ա, 2022 թվականի նոյեմբերի 23-ի N2531-Ա – N2564-Ա, 2022 թվականի նոյեմբերի 24-ի N2565-Ա – N2569-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N 2500-Ա, 2514-Ա, N 2515-Ա, N 2516-Ա, N 2517-Ա, N 2518-Ա, N 2519-Ա, N 2520-Ա, N 2534-Ա, N 2535-Ա, N 2536-Ա N 2565-Ա որոշումների՝
   1) վերնագրերը չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջին։
   2) որոշումերի նախաբաններում հղումը ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի /այսուհետ՝ Կարգ/ դրույթներին սխալ է գրառված։
   3) որոշումների մեջ չեն պահպանվել Կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանները։
2. N 2504-Ա, N 2505-Ա, N 2506-Ա, N 2507-Ա որոշումների նախաբաններում հղումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթին սխալ է կատարված։
3. N 2508-Ա, 2509-Ա և 2510-Ա որոշումների նախաբաններում հղումը ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման դրույթին սխալ է գրառված։
4. N 2511-Ա որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասին։
5. N 2512-Ա որոշման վերջին նախադասությունը անհրաժեշտ է համարակալել և համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասին։

6. N 2524-Ա, N 2525-Ա N 2526-Ա, N 2527-Ա, և N 2529-Ա որոշումների դրույթներում կատարված հղումները անհրաժեշտ էր գրառել որոշումների նախաբաններում։
7. N 2530-Ա որոշման 1-ին կետում հասցեն թերի է գրառված։
8. N 2533-Ա որոշման հղումը ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմանը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթին։
9. N 2556-Ա և N 2557-Ա ոոշումների նախաբաններում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթին, բացի այդ հղումները ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմանը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասին։
10. N 2558-Ա որոշման 2-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասին։
11. N 2560-Ա որոշման դրույթների համարակալումը սխալ է կատարված։
12. N 2561-Ա, N2562-Ա, N2563-Ա և N2564-Ա, նախաբաններում հղումը ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմանը թերի է գրառված։
13. N 2566-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթին։
14. N 2567-Ա որոշման դրույթներում պաշտոնները թերի են գրառված։
15. N2500-Ա - N 2569-Ա որոշումներում չի պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի վավերապայմանները։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի թիվ թիվ 2541-2554՝ սուրճի բացօթյա առևտրի իրականացման, ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն տալու մասին որոշումներում բացակայում են անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ անհրաժեշտ վավերապայմանները։

Վերոնշյալ դիտարկման համատեքստում առաջարկում ենք, թույլտվությունների տրամադրման որոշումներում պարտադիր ներառել անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ անհրաժեշտ վավերապայմանները։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ,
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

Կ. ԲԱԴԻՇՅԱՆ

Կատարող՝ Է. Բարսեղյան
Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին
*Հեռ. /0312/ 4-90-00*124*